Հավելված 7[26]

«--- ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3--»* ծածկագրով

Գնանշման հարցման հրավերի

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «--- ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3--»*

ք. Ալավերդի «27» 05 2021թ.

«_Ալավերդու համայնքապետարանը_», ի դեմս համայնքապետա Սասուն Խեչումյան -ի, որը գործում է համայնքապետարանի- կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և<<Թումանյանի ՃՇՇՁ>>ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մուկուչ Տիտանյան-ի, որը գործում է <<Թումանյանի ՃՇՇՁ>>ԲԲԸ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված _Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրի կնքման պահից 3 ամիս:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

---

[26] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն -100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա

Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված _____ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է --21540000-- (-քսանմեկ միլիոն հինգ հարյուր քառասուն հազար-) ՀՀ դրամ, որից -3590000 (---երեք միլիոն հինգ հարյուր իննիսուն հազար---) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1	«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
Ալավերդու համայնքապետարան	ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
ՀՀ ֆին Նախարարության Գործառնական Վարչություն	«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
հ/հ 900262504021	Հ/Հ 22032333371000
ՀՎՀՀ 06954208	ՀՎՀՀ 06600269
Համայնքի ղեկավար Ս.Խեչումյան	Տնօրեն՝ Մ.Տիտանյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« » 20 թ. կնքված
«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3»* *ծածկագրով պայմանագրի*

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքների կատարման

NN	գնի հիմք	Աշխատանքի նկարագիրը	Չ/մ	Քանակ	Միավ. գինը հազար դրամ	Ընդամենը հազար դրամ
	1	2	3	4	5	6
		Էնգելս թաղամասի կամուրջի և հրապարակի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	0,3	4,455	1,34
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,48	10,946	5,25
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,18	560,298	100,85
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	0,60	0,868	0,52
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	0,60	1,557	0,93
		Էնգելս կամրջից դեպի թիվ 1 դպրոց փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,0	4,455	4,45
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,18	10,946	1,97
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,21	560,298	117,66
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,000	0,868	1,74
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,000	1,557	3,11
		Դեբեդ թաղամասի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,5	4,455	6,68
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,36	10,946	3,94
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0288	305,991	8,81
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,42	560,298	235,33
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,24	522,463	125,39
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	3,0	0,868	2,60
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	3,0	1,557	4,67
		Թումանյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	3,0	4,455	13,36
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,72	10,946	7,88
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,95	560,298	532,28
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,0	0,868	5,21
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,0	1,557	9,34
		Զրավազան փողոցի դեպի 2-րդ դպրոց փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	0,5	4,455	2,23
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,36	10,946	3,94
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,15	560,298	84,04

4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,0	0,868	0,87
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,0	1,557	1,56
		Երիտասարդական փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,5	4,455	6,68
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,54	10,946	5,91
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,84	560,298	470,65
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	3,000	0,868	2,60
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտո-ինքնաթափով 5կմ հեռ.	տն	3,000	1,557	4,67
		Պղնձագործների փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	5,0	4,455	22,27
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,62	10,946	17,73
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,022	305,991	6,73
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	1,44	560,298	806,83
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,18	522,463	94,04
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	10,0	0,868	8,68
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	10,0	1,557	15,57
		Պղնձագործների փողոցից բնակելի շենքերով դեպի Գայի փողոց տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,0	4,455	4,45
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,72	10,946	7,88
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,38	560,298	212,91
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,0	0,868	1,74
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,0	1,557	3,11
		Գայի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	6,0	4,455	26,73
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,20	10,946	13,14
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	1,42	560,298	795,62
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	12,00	0,868	10,42
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	12,00	1,557	18,69
		Օսիպյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	3,0	4,455	13,36
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,44	10,946	15,76
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0504	305,991	15,42
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,28	560,298	156,88
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,42	522,463	219,43
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,0	0,868	5,21
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,0	1,557	9,34
		Շահումյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,2	4,455	9,80
2	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,76	560,298	425,83
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0264	305,991	8,08
4	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,22	522,463	114,94

5	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,40	0,868	3,82
6	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,40	1,557	6,85
		Շահումյան փողոցից դեպի թիվ 6 մանկապարտեզ և դեպի բնակելի շենքեր տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,0	4,455	8,91
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,32	10,946	14,45
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0768	305,991	23,50
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,10	560,298	56,03
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,64	522,463	334,38
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,0	0,868	3,47
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,0	1,557	6,23
		Զորավար Անդրանիկ փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	3,0	4,455	13,36
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,56	10,946	17,08
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	1,18	560,298	661,15
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	6,00	0,868	5,21
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	6,00	1,557	9,34
		Սայաթ-Նովա փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,0	4,455	4,45
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,84	10,946	9,19
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,32	560,298	179,30
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,0	0,868	1,74
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,0	1,557	3,11
		Միկոյան եղբայրների փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	5,0	4,455	22,27
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	2,52	10,946	27,58
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,1008	305,991	30,84
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	1,84	560,298	1030,95
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,84	522,463	438,87
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	10,00	0,868	8,68
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	10,00	1,557	15,57
		Սողոմոն Թեհլերյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	8,0	4,455	35,64
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	5,04	10,946	55,17
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0936	305,991	28,64
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	4,70	560,298	2633,40
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,78	522,463	407,52
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	16,0	0,868	13,89
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	16,0	1,557	24,92
		Զրավազան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,2	4,455	9,80
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,44	10,946	15,76
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	1,12	560,298	627,53

4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,400	0,868	3,82
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,400	1,557	6,85
		Սանահին -Սարահարթ թաղամասի հրապարակի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,5	4,455	11,14
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,32	10,946	14,45
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,612	305,991	187,27
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,32	560,298	179,30
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,51	522,463	266,46
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	5,0	0,868	4,34
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	5,0	1,557	7,79
		Սանահին կայարան թաղամասի փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	4,0	4,455	17,82
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,56	10,946	17,08
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0204	305,991	6,24
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	2,18	560,298	1221,45
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,17	522,463	88,82
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	8,0	0,868	6,94
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	8,0	1,557	12,46
		Սպանդարյան փողոցի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,0	4,455	8,91
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,44	10,946	15,76
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,92	560,298	515,47
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,00	0,868	3,47
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,00	1,557	6,23
		Հաղպատ համայնքի փողոցների փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,0	4,455	4,45
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,60	10,946	6,57
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,50	560,298	280,15
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,0	0,868	1,74
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,0	1,557	3,11
		Աքորի գյուղ տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	5,6	4,455	24,95
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	7,20	10,946	78,81
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	4,26	560,298	2386,87
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	11,200	0,868	9,72
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	11,200	1,557	17,44
		Հաղպատ գյուղի դեպի գերեզմաններ տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	1,0	4,455	4,45
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,60	10,946	6,57
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,42	560,298	235,33
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	2,0	0,868	1,74
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	2,0	1,557	3,11
		Բաղրամյան թաղամասի փողոցի փոսային նորոգման				

1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	0,5	4,455	2,23
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,24	10,946	2,63
3	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,20	560,298	112,06
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,0	0,868	0,87
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,0	1,557	1,56
		Միկոյան եղբայրների փողոցից դեպի դպրոց տանող ճանապարհի փոսային նարագման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	2,0	4,455	8,91
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	1,32	10,946	14,45
3	27-251 63-1	բիտումի լցաբաշխում /1.2կգ 1 մ2-ու համար /	տն	0,0504	305,991	15,42
4	16-4	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,19	560,298	106,46
5	16-5	ասֆալտաբետոնե ծածկույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 25մ2 մանրահատիկ	100մ²	0,42	522,463	219,43
6	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	4,0	0,868	3,47
7	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	4,0	1,557	6,23
		Միկոյան եղբայրներ փողոցից դեպի վանական համալիր տանող ճանապարհի փոսային նորոգման				
1	27-33	Ա/բետոնե ծածկույթի քանդում	մ³	0,50	4,455	2,23
2	16-51	փոսային նորոգման խճային հիմք 6սմ	մ³	0,30	10,946	3,28
3	16-4	ասֆալտաբետոնե ծած-կույթի փոսային նորոգում 5սմ հաստ. մինչև 5մ2 մանրահատիկ	100մ²	0,28	560,298	156,88
4	23-229	քանդված ա/բետոնի բարձում ա/ինքնաթափին ձեռքով	տն	1,00	0,868	0,87
5	Գ-130-5	քանդված ա/բետոնի տեղափոխում ավտոինքնաթափով 5կմ հեռ.	տն	1,00	1,557	1,56
		Ընդամենը				17950,00
		ԱԱՀ 20%				***3 590,00***
		Ընդամենը				***21540,00***

* Կապալառուն աշխատանքները կատարում է –Ալավերդի համայնք- հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220323333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Ս.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« » 20 թ. կնքված
«- ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3-» ծածկագրով պայմանագրի*

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
«ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱԼՑՄԱՆ » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքներ	Պայմանագրի կնքման պահից	3 ամիս
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220323333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Ն.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231187	Ալավերդի համայնքի փողոցների փոսալցման աշխատանքների ձեռք բերում	0			6462000			16155000			21540000			21540000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով*
*** հրավերում գումարները նշվում են փոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս փոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 22032333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Մ.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 6
«ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

1/ Սույն հրավերով նախատեսված աշխատանքների կատարման համար պահանջվում են հետևյալ լիցենզիաները.

ըստ «Քաղաքաշինական բնագավառ» հետևյալ ոլորտների՝

Չափաբաժինների համարները	*Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).*
1	*2*
1	«տրանսպորտային»

1. «Աշխատանքային ռեսուրսներ»

«Աշխատանքային ռեսուրսներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ որակավորումն ունեցող աշխատանքային ռեսուրսները - ինժեներ -շինարար, գլդոնավար, վարորդ, բանվոր

Ներկայացնել հիմնավորող փաստաթղթեր՝դիպլոմ,անձնագիր, վարորդական իրավունք և այլն

2. **«Տեխնիկական միջոցներ»** «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

Ներկայացնել հիմնավորող փաստաթուղթ

ա. կնքվելիք պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ տեխնիկական միջոցները- ինքնաթափ –ավտոմեքենա, գլդոն,օդային ճնշակ,հետընթաց մուրճ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 22032333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Մ.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5
« » 20 թ. կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱԼՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ***ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ***

N	ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	Երաշխիքային ժամկետ
1	Խիճ	3տարի
2	Ասֆալտաբետոն	3 տարի

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220323333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Մ.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված 5.1
« » 20 թ. կնքված
ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-21/3 ծածկագրով պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ԺԱՄԿԵՏԻ ՄԱՍԻՆ

N	ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	Երաշխիքային ժամկետ
1	ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՓՈՍԱԼՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ	1 տարի

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ
Զորավար Անդրանիկի 8/1
Ալավերդու համայնքապետարան
ՀՀ ֆինանսների Նախարարության
Գործառնական Վարչություն
հ/հ 900262504021
ՀՎՀՀ 06954208
Համայնքի ղեկավար՝ Ս.Խեչումյան

/ստորագրություն/

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Թումանյանի ՃՇՇՁ» ԲԲԸ
ք. Ալավերդի, Հաղպատ կ/կայարան
«ԱկբաԿրեդիտԱգրիկոլբանկ» ՓԲԸ
Հ/Հ 220323333710000
ՀՎՀՀ 06600269
Տնօրեն՝Մ.Տիտանյան

/ստորագրություն/
Կ.Տ